

ՄԻՀՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ

ՏԵՐ ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ

Սարդարապատի համազգային գոյամարտին եռանդուն մասնակցություն են ցույց տվել նաև հայ ժողովրդի հոգևոր հովիվները:

Շատ է գրվել հայտնի գիտնական եպիսկոպոս Գարեգին Հովսեփյանի, Կարնո առաջնորդ Զավեն եպիսկոպոս Մահտեսի Բաբայանի ղեկավար մասնակցության մասին: Նրանք խաչը ձեռքներին կռվի են առաջնորդել սակավաթիվ մնացած հայ զորքին: Սակայն գյուղական քահանաներն այդ օրերին խաչի փոխարեն հրացան վերցրած կռվի են տարել իրենց համագյուղացիներին և քաջաբար մարտնչել են դիրքերում՝ գործնական օրինակ ծառայելով իրենց իսկ կոչով կռվի դաշտ դուրս եկած երկրագործ մարդկանց:

Սարդարապատի հերոսամարտի օրերին մեծ գործ է կատարել Ղուրդղոլու գավառակի (այժմ Հոկտեմբերյանի շրջան) Զաֆարապատ (այժմ Գետաշեն) գյուղի քահանա Տեր Սահակ Սիմոնի Տեր-Սահակյանը:

Տեր Սահակը ծնվել է 1870 թվականին Զաֆարապատ գյուղում, սակայն նրա ծնողները Արարատյան դաշտ են եկել Արևմտահայաստանից՝ Սասունից, չկարողանալով տանել թուրք բռնակալների լուծը և ցանկանալով ապատ շունչ քաշել ռուսական պետության հովանու տակ:

Գյուղի ծխական դպրոցում գրաճանաչություն սովորելուց հետո պատանի Սահակն ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որն ավարտում է 90-ական թվականներին: 1896 թվականին Տ. Տ. Մկրտիչ Խրիմյանի կաթողիկոսության ժամանակ ճեմարանավարտ Սահակը ձեռնադրվում է Զաֆարապատ գյուղի քահանա:

Երիտասարդ քահանան հոգևոր, կրթական գովելի աշխատանք է կատարում իրենց գյուղում, կանոնավոր հիմքերի վրա է դնում ծխական դպրոցը: Գյուղացիներին սովորեցնում է բաժանորդագրվել Թիֆլիսում լույս տեսնող հայերեն թերթերին: Հոգևոր աշխատանքը համատեղելով երկրագործության հետ՝ Տեր Սահակը միաժամանակ չի դադարում մաճ բռնելուց:

1917 թվականին, ռուսական փետրվարյան հեղափոխությունից հետո, Արաքսի հակառակ ափին ապրող մահմեդականները փորձում էին Արաքսն անցնել և կողոպտել Զաֆարապատ և Քյալագար գյուղերը: Տեր Սահակը ոտքի է հանում գյուղի ժողովրդին և հաջող հակահարված տալիս ինչպես Ղարադալայի կամուրջը, նույնպես և Արաքս գետը անցնելու փորձ կատարողներին: Տեր Սահակին հաջողվում է համագյուղացիներին սովորեցնել պինվել և կալմ ու պատրաստ լինել ամեն մի նոր փորձության դեմ:

Արաքսի հանդիպակաց ափի մահմեդականների հարձակումները Զաֆարապատի և

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1978 թվականի № № Ը—Թ-ից:

մերձակա հայկական գյուղերի վրա շարունակական բնույթ են ստանում: 1918 թվականի մայիսի 9-ին Տեր Սահակը, ինչպես և շրջակա գյուղերի բոլոր գյուղացիները իրենց ընտանիքները տեղափոխում են Էջմիածին, սակայն իրենք վինված մնում են հայրենի գյուղերում:

Նրա խորհրդով և նրա օրինակին հետևելով, այդպես են վարվում նաև Զաֆարապատի և մոտակա գյուղերի վենքի ընդունակ բոլոր տղամարդիկ:

1918 թվականի մայիսի 21-ին թուրքական բանակը գրավում է Սարդարապատ գյուղն ու կայարանը, իսկ գիշերը, նրանց հետ եկած բաշիբոզուկները հարձակվում են գյուղերի վրա՝ թալանելու և այրելու: Տեր Սահակի ջոկատները կռվի են բռնվում նրանց հետ և դուրս քշում գյուղերից, իսկ արդեն մայիսի 22-ին սկսվում է հայ վորքի հակահարվածը Սև ջրի կողմից: Տեր Սահակն անմիջապես իր շուրջն է հավաքում Զաֆարապատի, Քյալագարխի, Շահրիարի և Զանֆիդա գյուղերի վենք բռնող գյուղացիներին ու կռվի տանում նրանց տաճկական բանակի դեմ:

Ռազմաճակատի ընդհանուր հրամանատար գնդապետ Դանիել բեկ Փիրումյանը որոշում է Տեր Սահակի ջոկատի տեղը: Նրանք անմիջապես դիրքեր են մտնում Տեր Սահակի ղեկավարությամբ. կռվի բոլոր յոթ օրերի ընթացքում, կուրծքները ժայռի նման դեմ տված թշնամու կատաղի գրոհներին, նրանք մարտընչում են և հերոսաբար պաշտպանում իրենց բնագիծը՝ արժանանալով հրամանատարի խրախուսանքին:

Սարդարապատում, 1918 թվի մայիսի 22—27-ին, ինչպես ասում են, հրաշք տեղի ունեցավ: Թուրքական բանակը պարտվեց, փախուստի մատնվեց ու ջախջախվեց, սակավաթիվ հայ վորքը հաղթանակ տարավ:

Պարտված ու փախուստի մատնված թուրքերը, սակայն, չհաշտվեցին իրենց դրության հետ: Երբ Բաթումում կնքված հաշտության պայմանագրով հայ վորքը ետ քաշվեց և կորցրեց իր նպաստավոր դիրքերը, թուրքական բանակի հրամանատար Շևքի փաշան ժամանակը պատեհ համարեց պարտության վրեժը լուծելու համար և մեկ վորաբաժնով հարձակման անցավ այս անգամ արդեն Էջմիածնի վրա, քաղաքից ութ կիլոմետր դեպի արևմուտք ընկած Քյորփալու (այժմ Արշալույս) գյուղի մոտից: Այդ կռիվը հայտնի է «Քյորփալուի կռիվ» անունով:

Էջմիածնի վանքերի վանգերի տագնապալի զողանջները Սարդարապատյան օրերի նման հայ ժողովրդին ոտքի հանեցին: Տեր Սահակը Էջմիածին քաղաքում տեղավորված ջաֆարապատցիներից, մյուս գյուղացիներից և սուրմալվեցիներից կազմեց մեծ ջոկատ, ինքն էլ վինված նրանց գլուխն անցավ, ուղղվեց հասավ Քյորփալու՝ կռվի վայրը, որտեղ գըտնվում էին նաև Գրամփա գյուղի քահանա Տեր Հովհաննեսի աշխարհակորային ջոկատը և Էջմիածնի ամբողջ շրջանի գյուղերի աշխարհակորայինները: Կռիվը կատաղի էր և վտանգավոր, թուրքերը ցանկանում էին ուժեղ հարվածով կոտրել հայերի դիմադրությունը և մեկ շնչով հասնել մինչև Երևան:

Առանց հայ վորահրամանատարության և կառավարության թույլտվության, ինքնագլուխ, աշխարհակորայիններին օգնության հասան Էջմիածին քաղաքում գտնվող մահապարտների 5-րդ գունդը, քաղաքի պարետային վաշտը և Սամաղարում գտնվող պարտիզանական գունդը՝ հինգ թնդանոթներով: Յոթ ժամ տևած կատաղի մարտերից հետո թուրքերը գլխովին ջարդված, Քյորփալուի ղռերում թողնելով իրենց բանակի քառորդ մասը՝ սպանվածներ, մինչև Սարդարապատ խուճապահար փախան: Հայերը նրանց չհետապնդեցին. կանգ առան սահմանագծում:

Տեր Սահակի և Տեր Հովհաննեսի եռանդուն մասնակցությունը ոգեշնչման և սնձնապոհության խթան հանդիսացավ հայ փոքրաթիվ վորքերի համար: Այս անգամ ևս ժողովուրդը փառավոր հաղթանակ տարած քահանաներին և հայ մարտիկներին, գյուղերի միջով անցնելիս, ցնծությամբ դիմավորեց և «ուռա»-ներով ճանապարհեց:

Նույն 1918 թվականի վերջերին ջաֆարապատցիները հնարավորություն ստացան վերադառնալու թուրքական բռնագրավումից ազատագրված իրենց գյուղը: Տեր Սահակն իր բազմանդամ ընտանիքով նույնպես վերադարձավ Զաֆարապատ, որը ավերակույտի էր վերածվել թուրք նվաճողների իշխանության տակ: Սովն ու համաճարակային հիվանդությունները, գյուղատնտեսական ծանր աշխատանքները իրենց բացասական ազդեցությունը գործեցին Տեր Սահակի առողջության վրա, և նա վախճանվեց 1924 թվականին 54 տարեկան հասակում: Էջմիածնի միաբանությունը Արիստակես եպիսկոպոս Զուլոյանին Զաֆարապատ էր ուղարկել պատշաճ թաղում կազմակերպելու համար: Ինչպես Զաֆարապատի, նույնպես և շրջակա գյուղերի բնակիչները հավաքվել էին իրենց հարգանքը մատուցելու օրինակելի հոգևոր հովիվ, աշխարհակորայինների հերոս ղեկավար, հայրենասեր Տեր Սահակ Սիմոնի Տեր Սահակյանին:

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Չնայած բավական ժամանակ է անցել 1918 թվականի ծանր օրերից, հայ ազգը չի մոռացել իր հերոս հոգևոր հայրերից ևս մեկի՝ Ղարաքիլիսայի ռազմաճակատի առաջավոր դիրքերում թրքերը ջարդարար բանակի դեմ մարտնչած, աշխարհազորայինների ջոկատի ղեկավար, Դարպաս գյուղի քահանա Տեր Կոմիտաս Կարապետի Սարգսյանի կատարած մեծ գործերի մասին:

Տեր Կոմիտասը ծնվել է Շիրակի գավառի Մոլլագյոզչայի (այժմ Արթիկ) շրջանի Մայմենջուղ (այժմ Պեմզաշեն) գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Նրա պապերը, կոտորածներից փրկված, գաղթել են Արևմտահայաստանի Խնուսի գավառի Դուման գյուղից: Պատանի հասակում նա չորս տարի սովորում է գյուղի օդաներում, ապա Հառիճ վանքի միաբանները նրան վերցնում են իրենց խնամքի տակ և հոգևոր անհրաժեշտ կրթություն տալուց հետո իրենց միջնորդությամբ ընդունել են տալիս Գևորգյան ճեմարանը: Երեք տարի սովորելուց հետո, ընտանեկան ծանր պայմանների բերումով նա ստիպված է լինում կիսատ թողնել իր ուսումը և զբաղվել ուսուցչությամբ՝ երկու տարի Քութայիսի շրջանում և երեք տարի Լենքորանում: Այստեղից նա վերադառնում է հայրենի գյուղ և ամուսնանում:

Մայմենջուղում ապրած տարիներին Տեր Կոմիտասը նորից լծվում է մատաղ սերնդի դաստիարակության գործին, միաժամանակ որպես դպիր մասնակցում եկեղեցու ժամերգություններին: Տեր Կոմիտասը օժտված էր քաղցրահնչյուն սքանչելի ձայնով: Որպես հոգևոր բարձրագույն կրթություն ստացած և բավականաչափ պատրաստված մարդ, Տեր Կոմիտասը ձեռնադրվում է նախ սարկավագ, ապա քահանա և ուղարկվում Ալեքսանդրապոլ քաղաքի սուրբ Աստվածածին վանք: Տասնվեց տարի այդտեղ ծառայելուց հետո 1910 թվականին նրան նշանակում են Ղարաքիլիսայի (այժմ Կիրովական) շրջանի Դարպաս գյուղի քահանա:

Նորընծա քահանայի առաջնահերթ գործն է լինում Դարպաս գյուղում կառուցել տալ ծխական նոր դպրոցի շենք իր բոլոր հարմարություններով և պատանիներին կտրել Ղշլաղ գյուղի դպրոցը գնալ-գալու երկար ճանապարհից:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նա քուն ու դադար չուներ. նրա ուսերին էին ծանրացած Եղեռնից փրկված-ների պարենավորման և ծնողազուրկ երեխաների համար որբանոց բաց անելու գործերը: Նրա թափած ջանքերի շնորհիվ հարյուրավորներ փրկվեցին սովից:

1918 թվի մայիսին Ալեքսանդրապոլի անկումից հետո, երբ տաճկական բանակը կրնկակոխ հետապնդում էր հայ գաղթականությանը, Տեր Կոմիտասը կազմակերպված փոքրաթիվ հայ զորքի գլուխն անցած՝ Մեծ Ղարաքիլիսան անցնելով հասավ Դիլիջան:

Ղարաքիլիսայից երեք կիլոմետր դեպի արևմուտք ընկած Դարպաս գյուղը իր բնական դիրքով իրոք որ հանդիսանում էր Ղարաքիլիսա գյուղաքաղաքը մուտք գործող դարպասը: Երբ տաճկական բանակը Համամլու հասավ, Տեր Կոմիտասը խուճապի չմատնվեց, անմիջապես եկեղեցու տագնապալի զանգահարություններով բոլորին ոտքի հանեց: Գյուղի կենտրոնում խռնվել էր ժողովրդի մեծ բազմություն, անգամ կանայք իրենց երեխաներով: Բոլորին համակել էր ահն ու սարսափը: Տեր Կոմիտասը ոտից-գլուխ զինված և զգեստափոխված, հոգու ներքին խռովքից սիրտը ալեկոծ՝ խաչը վեր բարձրացրեց, օրհնեց և ոգեշունչ մի ճառով խրախուսեց կարդաց հավաքված բազմությանը:

Շատ չանցած, աշխարհազորայինները վրեժխնդրության ոգով լցված շարժվեցին առաջ, դիրքեր գրավեցին գյուղից հեռու «Փորթերի յաթաղ» կոչվող դար ու փոսերում և սպասեցին թշնամուն: Դարպասցիների օրինակին հետևեց մոտակա Ղշլաղ, Վաջիղարա և ուրիշ գյուղերի ժողովուրդը: Փամբակի հովտում ոչ մի ընտանիքի թույլ չտրվեց տեղից շարժվելու. նրանք մնացին, և ով ինչով և ինչպես կարող էր, մասնակցեց ինքնապաշտպանության մարտերին:

Մի քանի օրից հետո Մեսրոպ եպիսկոպոս Տեր Մովսիսյանի առաջնորդությամբ հայ զորքը կամավորական ջոկատների հետ Դիլիջանից վերադարձավ Ղարաքիլիսա և անցավ գրոհի: Ճակատամարտը թուրքերի դեմ սկսվեց: Տեր Կոմիտասի ջոկատի աշխարհազորայինները խրամատավորվեցին գյուղի դիմացի դար ու փոսերում: Երեք օր կատաղի մարտեր էին գնում, աշխարհազորայինները քաջության հրաշքներ էին գործում՝ թև ու թիկունք դարձած կողք-կողքի կռվող զորամասերին: Վիրավորները շարունակում էին կռվել, չէին լքում դիրքերը: Նրանցից շատ-շատերը զոհվեցին, բայց վենքը ձեռքներին, թշնամուց կրկնակի չափով վրեժ լուծելուց հետո: Նրանց թափած յուրաքանչյուր կաթիլ արյունը ծառայեց հայ ազգը բնաջնջումից փրկելու գործին և ճանապարհ հարթեց նոր

սերունդների գոյատևմանը: Վերջին օրը, մայիսի 28-ին աշխարհակորայինները կորքի հետ միասին քանդեցին թշնամու գերականց ուժերի շղթան, ռազմամթերքի սպառման պատճառով, և անցան Դիլիջան:

1918 թվականի աշնանը, թուրքերի նահանջից հետո, Տեր Կոմիտասը նորից վերադարձավ Դարպաս և շարունակեց քահանայագործել: Իսկ 1921 թվականից տեղափոխվեց հայրենի գյուղը՝ Մայմենջուղ, իր համար նոր բնակարան շինեց և ապրեց որպես քաջ հովիվ, որ «կանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: Անժամանակ մահը Տեր Կոմիտասի կյանքի թելը կտրեց 1928 թվականին: Նա վախճանվեց 67 տարեկան հասակում և թաղվեց Մայմենջուղի գերեզմանատանը:

Դարպասի, Մայմենջուղի և շրջակա գյուղերի հոծ բազմությունը փառավոր թաղում կազմակերպեց և հրաժեշտի վերջին հարգանքը մատուցեց ժողովրդի հերոս քահանա Տեր Կոմիտաս Կարապետի Սարգսյանին: